ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի

01.02.2019թ. նիստի

<u>Օրակարգ</u>

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Մագիստրոսական թեզերի ու դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքը:
3. Ընթացիկ հարցեր. Ֆակուլտետի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին :

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 19-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության, գերմանական բանասիրության, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոններից անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածուների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության, գերմանական բանասիրության, միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնների վարիչները ներկայացրեցին առաջադրվող թեկնածուներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետից անվանական կրթաթոշակի ներկայացնել հետևյալ ուսանողներին.

1. Հարությունյան Ռաֆայել Գառնիկի /անգլ. լեզու և գրակ., մագ. 1-ին կուրս/ - Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ:
2. Ասիլյան Աիդա Աշոտի /գերմ. լեզու և գրակ., 3-րդ կուրս/ - Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ,
3. Մարգարյան Մերինե Արմենի /միջմշակ. հաղորդակցության անգլ, 3-րդ կուրս/ - Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնների վարիչները զեկուցեցին, որ ընդհանուր առմամբ մագիստրոսական թեզերի ու դիպլոմային աշխատանքներն ընթանում են նորմալ, արդեն պայմանավորվածություններ են ձեռք բերվել մագիստրոսական թեզերը գրախոսելու համար այլ բուհեր ուղարկելու վերաբերյալ:

3. ԼՍԵՑԻՆ՝ Ռոմանագերմանական բանասիրության Ֆակուլտետի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Քանի որ ֆակուլտետի անվանումը փոխվել է *Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ*-ի, միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց ֆակուլտետի կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Գիտխորհրդի նախագահ՝ Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝ Գ. Մուրադյան

1 փետրվարի 2019 թ.